Ամերիկայի Հայ օգնության ֆունդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից
 2015 թ. իրականացվելիք սոցիալական

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Պ Գ Ի Ր

1	Ծրագրի անմիջական նպատակը	Քարծր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապատում, լքված, կրթությունից և այլ համայն ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհոգակալ խնդիրներով, երեխաների համար «ճանաչումի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝ 1) Ներկենտրոնային - Կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և/կամ վերատեսչակարգում 2) Արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ռադիոհամայնքում ու այլ մարմինների կողմից ստացված անհազանցելի առնչությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում կրկնելու համայնքում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում մարտահրավեր մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրեմական պիտույքների, սամիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրամեքենաների, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում:
3	Բարեգործը	Ամերիկայի Հայ օգնության ֆունդ, Նյու Յորքի գրասենյակ:
4	Ծրագրի կատարողը	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ, հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլենցու փողոց, քիվ 64, ՀՎՀՀ 01009295
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր Բնագավառը՝ սոցիալական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցություն
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 102 759 368 ՀՀ դրամ: Միջոցները ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՑ-ի Նյու Յորքի գրասենյակից:
7	Բարեգործություն ստացողը	Քարծր սոցիալական ռիսկի խմբի՝ բախառաշարիկ, աղքատ, անապահով, մտրազիկ, անապատում, խնամազուրկ, լքված, բռնությունների գոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և

14/10

8	Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը	աջակցության կարիք ունեն և Կենտրոն են ուղղորդվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժինների, հասայնքային խնամակալության համընդհանրվածների, կրթական հաստատությունների, պետական և հասարակական այլ տարբեր առյուծների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն): Շահանքային ծառայությունները կատարվում են ընտանիքում և արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կապասարկվի մոտ 1500 երեխա և ավելի քան 1000 ծնող: Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաներ/ընտանիքները կտանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱՀՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները: Այնպես էլ, որ տարվա ընթացքում ծառայություններ կտանան մինչև 3000 շահառուներ: 01.01.2015թ. - 31.12.2015թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը	Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի մեղքը և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական և ստանում 24-ժամյա խնամք, վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի մեղքը գտնվողները Կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում: Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմաանալիտիկական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում: Ծառայությունները մատուցվելու են երկու մուտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում: Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (իլիգենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացվող) բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, բերավարիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնությունների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահասակություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի: Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են այլալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի

17/10

	<p>քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանեկանին՝ հարթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Մտցիավ- հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնորմերը 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ այցելությունների միջոցով: Երեխաները կենտրոն են ուղարկվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակում- ների:</p> <p>Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սնունդի, հագուստի, ատոլոգիայի, առողջապահական, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, արհմիջոցառումային և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը ու սահմանված հարկերը:</p> <p>Ծրագրի ընդհանուր արժեքը 2015թ. համար կազմելու է 102 759 368 ՀՀ դրամ, որը ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ, երրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ և չորրորդ եռամսյակ՝ 25 689 842 ՀՀ դրամ:</p> <p>Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների.</p> <ol style="list-style-type: none"> 1. սնունդ՝ 11 800 000 ՀՀ դրամ 2. բժշկական սպասարկում/դերորայք/ և հագուստի ձեռքբերում 2 025 000 ՀՀ դրամ 3. Կոմունալ և կապի ծախսեր՝ 9 000 000 ՀՀ դրամ 4. 2ինությունների սպասարկում 1 000 000 ՀՀ դրամ 5. հաշվապահական և ատոլոգիայի ծառայություն 4 856 000 ՀՀ դրամ 6. տրանսպորտային ծախսեր՝ 4 150 000 ՀՀ դրամ 7. գրասենյակային պիտույքներ՝ 500 000 ՀՀ դրամ 8. սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) 42 000 000 ՀՀ դրամ, 9. կազմակերպչական ծախսեր՝ 18 450 000 դրամ 10. սանիտարահիգիենիկ պիտույքներ՝ 1 000 000 ՀՀ դրամ 11. ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայություն՝ 7 978 368 ՀՀ դրամ: <p>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար:</p>
<p>10 Ձեռք բերվող (ներմուծվող) ավարտների ծառայու- թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Ակնկալում ենք 2015թ. հունվարի 01-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, ք. Երևան, Քոչար 13ա, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 3 500 000 ՀՀ դրամ 2. «Հայտուստագադար» ՓԲԸ, ք. Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված Պայմանագիր N 013.08.13.0948, Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 5 000 000 ՀՀ դրամ <p style="text-align: right;">14/10</p>
	<ol style="list-style-type: none"> 3. «Երևան ջուր» ՓԲԸ ք. Երևան, Աբովյան 66ա, ՀՎՀՀ 01555351, Պայմանագիր՝ կնքված 01.04.2009թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 000 000 ՀՀ դրամ 4. «Արմենիա Տելեֆոն Կոմյունի» ՓԲԸ, ք. Երևան, Մալաթյան 2, ՀՎՀՀ 02500052, երկկողմանի Պայմանագիր, Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 500 000 ՀՀ դրամ 5. «Աշտարակ - Կար» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, ցյուր Ագարակ, ՀՎՀՀ 05001995, Պայմանագիր՝ կնքված է 01.10.2010թ. և Հանձնայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ 6. «Դավիթ 84» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 22/1, ՀՎՀՀ 00833046, Պայմանագիր՝ կնքված 26.11.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 300 000 ՀՀ դրամ 7. «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Մալաթի 31, ՀՎՀՀ 02226764, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Հանձնայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ 8. «Տեխնոբեմ Ինտերնեյշնլ» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278, ՀՎՀՀ 01529519, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Հանձնայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 1 000 000 ՀՀ դրամ 9. «Փրայտորբիտալստատս» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278, ՀՎՀՀ 02586628, Հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ- հանձնայնագիր թիվ 50100215, կնքված 25.11.2014թ., Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 4 356 000 ՀՀ դրամ 10. «Էլվիսի քրոնսայթինգ ընդ ատդիս» ՍՊԸ, ք. Երևան, Նուրբարաշեն 10փ., տ. 6, ՏԳՀ՝ ք. Երևան, Մյասնիկյան պող. 5/1, ՀՎՀՀ 00433357, Պայմանագիր N 37, կնքված 10.11.2014թ., Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ <p style="text-align: right;">14/10</p>



14/10

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

8.12.14 № 04/80-2/

Ձեր № 22445-14

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.11.2014թ. N 15/15.1/20023-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, առաջարկում ենք ծրագրի իրականացման համար անհրաժեշտ առանձին միջոցառումների համար նախատեսված ֆինանսական միջոցների նկարագիրը 6-րդ կետի փոխարեն ներկայացնել 9-րդ կետում:

Հարգանքով

Ասոմ Զանդուղայան/

080/37908-14

Կառարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-549

14/10

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	<p>11. «Էյ-Ի-Ջի-Մերվիս», ք. Երևան, Արմենի-00, ՀՎՀՀ 00930884, 09.04.2010թ. Պայմանագիր N Ե-1118, Համաձայնագիր N 3/Ե-1118, 10.04.2013թ. և Համաձայնագիր N 5/Ե-1118, 10.11.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 170 370 ՀՀ դրամ 12. ՀՀ Ոստիկանություն, ք. Երևան, Նալբանդյան 130, ՀՎՀՀ 01533334, 08.01.09թ. կնքված Պայմանագիր N 01/09 և կից Համաձայնագրեր՝ կնքված 01.03.2010թ. և 06.11.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 7 978 368 ՀՀ դրամ:</p> <p>13. «Ալեքս Գրիգ» ՍՊԸ, ք. Երևան, Տիգրանի 3-րդ ցրք., 2/2, ՀՎՀՀ 01842346, Պայմանագիր՝ կնքված 14.10.2011թ. և Համաձայնագիր՝ 11.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 5 000 000 ՀՀ դրամ</p> <p>14. «Յուրո» ՍՊԸ, ք. Երևան, Մայաք-Նովա 40/1, ՀՎՀՀ 00024873, Պայմանագիր N 023/27/112012, կնքված 27.11.2012թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 1 500 000 ՀՀ դրամ</p> <p>15. «ՊԱՏՐՈՆ ՌՍ» ՍՊԸ, ք. Երևան, Հանրապետության 62/133, ՀՎՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ. Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար՝ 400 000 ՀՀ դրամ</p>
12	Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/կազմակերպությունների հետ	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 18 450 000 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժեքության 17.95 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են մարզերում անչափահասների հարցերով հանձնաժողովների նյութերին Կենտրոնի աշխատակիցների մասնակցության, կենտրոնի արժիմիստրատիվ աշխատակազմի աշխատավարձի, անբարեկամատ ընտանիքների այցելությունների համար տրանսպորտային և գործարքման, մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման (սեմինարների/դասընթացների մասնակցություն), տպագրական, գրասենյակի աշխատակիցների գրեմական պիտույքների և համակարգիչների պատարկման ծախսերը:</p>
13	Ծրագրի արդյունավետության մկատմանը վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային խնամակալության հանձնաժողովներ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն:</p> <p>Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի Խորհրդի, ինչպես նաև եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից:</p>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հայաստան 41*, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

Վ.12.14 N 02/9588-14

Ձեռք N _____

14/10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի 15/15.1/20023-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի դրույթների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծրագրի 8-րդ կետի համաձայն ծրագիրը մեկնարկում է 2015 թվականի հունվարի 1-ից և ավարտվում է 2015 թվականի դեկտեմբերի 31-ին, մինչդեռ ծրագրի 9-րդ կետում ծրագրի իրականացման ֆինանսական միջոցների վերաբերյալ դրույթներում նախատեսված է ծրագրի ընդհանուր արժեքը 2014 թվականի համար: Ծրագրի 9-րդ կետում նշված է, որ երեխաների աջակցության կենտրոն ուղղորդվելու են երեխաներ նաև Ռուսաստանի Դաշնությունից, Մոլդովայից, Ուկրայինայից, մինչդեռ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների նկարագրության մեջ նախատեսված չեն դրույթներ վերջիններիս մասին:

035/37618-14

Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

14/10

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԾԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄՈՖԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/10

« 4 » 12 2014 թ.

N 98 / ԿՁԱԿԳ /
9849-14

Ձեր 2014-11-28, 15/15.1/20023-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

040137491-14

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
գարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ե Ր Ի Ն Ա Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/21930-14

2.12.14,
14/10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.11.2014թ. թիվ 15/15.1/20023-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

024/37206-14

ԳՄՀԱՄ քաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

«Ամերիկայի Հայ օգնության ֆունդի «Երեւանների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն – 08.12.14, N 07/80-2/22445-14	
1. Առաջարկում ենք ծրագրի իրականացման համար անհրաժեշտ առանձին միջոցառումների համար նախատեսված ֆինանսական միջոցների նկարագրող 6-րդ կետի փոխարեն ներկայացնել 9-րդ կետում	1. Դիտողությունը հաշվի է առնվել: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակները
ՀՀ արդարադատության նախարարություն – 04.12.14, N 02/95588-14	
1. Ամերիկայի Հայ օգնության ֆունդի «Երեւանների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականին իրականացվող ծրագրի դրույթների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծրագրի 8-րդ կետի համաձայն ծրագիրը մեկտրվում է 2015 թվականի հունվարի 1-ից և ավարտվում է 2015 թվականի դեկտեմբերի 31-ին, մինչդեռ ծրագրի 9-րդ կետում ծրագրի իրականացման ֆինանսական միջոցների վերաբերյալ դրույթներում նախատեսված է ծրագրի ընդհանուր արժեքը 2014 թվականի համար: Ծրագրի 9-րդ կետում նշված է, որ երեւանների աջակցության կենտրոն ուղղորդվելու են երեւաններ նաև Ռուսաստանի Դաշնությունից, Մոլդովայից, Ուկրաինայից, մինչդեռ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների նկարագրության մեջ նախատեսված չեն դրույթներ վերջիններին մասին: Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել	1. Դիտողությունը հաշվի է առնվել: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակները 14/10

ԼԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 դեկտեմբերի 2014 թվականի N Մ- -Ա
 քաղ. Երևան

14/11

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
 ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԱՎԱՆ
 ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԽՄԲԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐԹ-
 ԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -14 և նոյեմբերի -ի N 06/3-3/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի ՖԲ/ԱՆՄ-4/ -14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի -ի N 01/10.1-1/ -14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է:**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աղոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 27,681,000 դրամ արժողությամբ «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասնականների հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Մ.Մ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2014 թվականի մայիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների պատրաստում և տեղադրում՝ 4,676,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

19/11

Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Հաստատված է
«Կամբրակ» ՍՖՀ-ի
տնօրեն Բ. ԱՂԱՄԱՆՍՄԻ կողմից
«18» Նոյեմբեր 2014 թ.


Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգման ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնությունից
3.	Բարեգործը	«LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO, նախագահ Տիկին Հայրե Արթուրյան Քիմ, Շվեյցարիա (Giacometti stasse 134.7000 Chur, FO0569480):
4.	Ծրագրին կատարվող	«Կամբրակ» ՍՖՀ-ի-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. երևան, Զ. Քանաքեղոս 129/5, ՀՎՀՀ 01003187, Հեռ.՝ 516-044, Ֆաքս՝ 56-13-03
5.	Ծրագրի իրականացման վայրը և քննադատող	Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերդավան համայնք, քննադատող սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդամուր բյուջեն կազմում է 27,681,000 (Քսանյութ միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար) դրամ: «LITTLE BRIDGE SWITZERLAND» NGO-ի միջոցներ 26,681,000 և Բերդավանի համայնքի միջոցներ 1,000,000:
7.	Բարեգործություն ստացողը	Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2014 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2015 թվականի հուլիսի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամերաժշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմվել է «ԲՃՆԱՆ» ՄՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլիոն յոթհարյուր քսանհինգ հազար դրամ) – 2014 թվականի մայիս – 2014 թվականի հուլիս (ավելացված արժեքի հարկ չի առաջանում): Ներքին դրույթի և յուրամուտների փոփոխման համար «ՄՄՄ-ՄՊԸ-ի հետ կնքվել է կապարի

19/11

		<p>պայմանագիր 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասուն վեց հազար) դրամ - 2014 թվականի մայիս - 2015 թվականի հուլիս: Շինարարական աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանագիր - 20280000 դրամի չափով: Համայնքի կողմից ներդրումը կազմելու է 1000000 (մեկ միլիոն դրամ), որի համար հարկային արտոնություն չի ակնկալվում:</p>
10.	<p>Չնքք բեզվետ(ներմուծվող) ապրանքների և ու ծառայությունների համառոտ նկարագրող, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Նախագծման համաշխարհային ֆաստաթթրերի կազմվել է "ԲՁՆԱՆ" ՍՊԸ-ի կողմից, որը կազմել է 1725000 (մեկ միլիոն յոթհարյուր բաննիսն հազար դրամ): Շինարարական աշխատանքների կատարման համար կնքվելու է կապալի պայմանագիր, իսկ արտաքին և ներքին որևէ ու լուսամուտների փոփոխման համար «ՄՄՄ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր 4676000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) դրամ: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</p>
11.	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր</p>	
12.	<p>Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ա.լ. կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացվում է «Կամբջակ» ՍԲՀ-ի կողմից համագործակցելով Տավուշի մարզի Բերդավան գյուղի գյուղապետարանի հետ:</p>
13.	<p>Ծրագրի արդյունավետության մրատման փորձակության մեթոդիզացիաների նկարագրությունը</p>	<p>Վերահսկողությունը կատարվելու է և համայնքի ղեկավարի կողմից, իսկ աշխատանքները կատարելուց հետո, ասիանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն</p>

«Կամբջակ» ՍԲՀ-ի անդերն Բենյամին Աղամալյան



14/11



14/11

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
 Հեռ. (+374 60) 700 255

28.11.14 № 07/80-2/1
 Ձեր № 21500-14

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.11.2014թ. N 15/15.1/19570-14 գրության՝ կապված «Կամբջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում նշել նաև «Կամբջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության և «Մ.Ս.Մ.» ՍՊԸ-ի միջև 16.05.2014թ. կնքված պայմանագրի անվանումը («Կապալի պայմանագիր»):

Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված պայմանագրի 6-րդ կետի համաձայն պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է մինչև 30.08.2014թ.:

Հարգանքով

Արամ Զանգուրյան/

0804/36676-14



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

14/11

0078, Երևան, Հալաբյան 41^ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtyan@justice.am

27-11-14 N 02/9263-14

Ձեռք N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 21-ի 15/15.1/19570-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

035/36577-14

Կատարող՝ Ալբա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

14/11

«25» 11 2014 թ.

N 95/ՎՁԱԿ-Ա/ 9554-14

Ձեռք 2014-11-21, 15/15.1/19570-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/36269-14

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mlsa.am> info@mlsa.am



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/21541-14
28.11.14 14/11

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.11.2014թ. N15/15.1/19570-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից բարեգործական որակելու նպատակով ներկայացված ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 16.05.2014թ-ից մինչև 30.07.2015թ-ը: Նույն նախագծով նախատեսվում է նաև այդ ծրագրին հարակից գործարք ճանաչել «Մ.Մ.Մ.» ՍՊԸ հետ 16.05.2014թ. կնքված պայմանագրով գործարքը, որի կատարման վերջնաժամկետը սահմանված 2014թ. օգոստոսի 30-ը: Միաժամանակ ՀՀ կառավարության 13.01.2003թ. N66-Ն որոշմամբ հաստատված Հավելված 2-ով սահմանված կարգի 11-րդ կետի համաձայն, ծրագիրը բարեգործական որակելու, այդպիսի ծրագրերի հետ անմիջականորեն կապված հարակից գործարքների շրջանակը որոշելու վերաբերյալ հայտը պետք է ներկայացվի մինչև ծրագրի իրականացումը նախաձեռնելը:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ՝ ծրագիրը և հարակից գործարքը բարեգործական որակման նպատակով ծրագրի մեկնարկից հետո ներկայացնելու վերաբերյալ:

Հարգանքով՝

 Վ. Միրումյան

030/36682-14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР
REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

14/11

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, ՔԱ, Գ, Իձջեվան Տաղմանադրյան 1, ՔԱ, Իջևան Sahmanadrutyanyan 1
հեռ. tel.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /ֆакс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB <http://tavush.gov.am>

01/10.1/4592-14
26.11.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 21.11.2014թ.
թիվ 15/15.1/19570-14 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբասենյակների հիմնանորոգում» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության:

Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝



Հ. ԱՐՈՎՅԱՆ

կատ. Հ. Ղուկիջանյան

119/36396-14



ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
Տիարն Ս. Տեր-Սիմոնյանին


04.12.2014թ.

Հարգելի Տիարն Տեր-Սիմոնյան


Ի լրումն 18.11.2014 թվականի գրությանը հայտնում ենք Ձեզ Բերդավան
համայնքի մանակապարտեզի խմբասենյակների հիմնանորոգման ծրագրին
հարակից՝ «ՄՄՍ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի 6-րդ կետում ժամկետի մասով
տեղի է ունեցել վրիպակ: Ներկայացնում ենք ճշտված տարբերակը:

Բենիամին Աղամալյան
«Կամրջակ» ՄԲԿ-ի տնօրեն

Բջջ: 093-427-167
Ֆաքս: 56-13-03



3570



ք. Երևան

30 հունիսի 2014թ.

«Մ.Մ.Ս.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն, այսուհետ՝ Կապալառու,
ի դեմս ընկերության տնօրեն Մերուժան Միրիջանյանի, որը գործում է կանոնադրության
հիման վրա, մի կողմից, և

«ԿԱՄՐՋԱԿ» ՄԲԿ-ն, այսուհետ՝ Վճարող, ի դեմս կազմակերպության տնօրեն Բենյամեն
Աղամալյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, և

Տավուշի մարզի գյուղ Բերդավանի գյուղապետարանը, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս
գյուղապետ Արարատ Գաբրիելյանի,


կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառուն պարտավորվում է
Պատվիրատուի առաջադրանքով նախագծել և իրականացնել Տավուշի մարզի
Բերդավան գյուղի մանակապարտեզի դռների և պատուհանների տեղադրման
աշխատանքներ, իսկ վերջիններիս համար անհրաժեշտ վճարումներ կատարելու է
Վճարողը:
Սույն ենթակետում նշված աշխատանքների նախագծային ծավալները և դրանց գները
ներկայացված են ներկա պայմանագրի հավելվածներում, որոնք հաստատվում են
Կողմերի կողմից և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 1.2 Կապալառուն աշխատանքները կատարում է շինարարական նորմերին և կանոններին
համապատասխան, իր ուժերով, նյութերով, սարքավորումներով, գործիքներով և
պատասխանատվություն է կրում վերջիններիս որակի համար:
- 1.3 Աշխատանքները կսկսվեն Վճարողի կողմից կանխավճարը Կապալառուի
հաշվեհամարին փոխանցելուց անմիջապես հետո և կավարտվեն մինչև 2015թ.
օգոստոսի 31-ը:
Կապալառուն իրավունք ունի աշխատանքն ավարտել ժամկետից շուտ՝ Պատվիրատուի
համաձայնությամբ:
- 1.4 Աշխատանքները համարվում են կատարված Պատվիրատուի կամ նրա լիազոր
ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝
 - 2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքների
ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
 - 2.1.2 հրաժարվել պայմանագրից կատարելուց և պահանջել հիմնադրու դրամով իրեն
պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի ավարտել սույն պայմանագրի
կատարումը կամ աշխատանքները կատարում է անբավարար որակի ժամանակին
ավարտը դառնում է ակնհայտ անհնար:
- 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝



2.2.1 կապալառուի համար ստեղծել աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ պայմաններ:

14/11

2.3 *Գապալառուն իրավունք ունի*

2.3.2 աշխատանքը չսկսել, իսկ սկսած աշխատանքը դադարեցնել այն դեպքերում, երբ Պատվիրատուի կամ Վճարողի կողմից կապալի պայմանագրով ստանձնած պարտականությունները խախտելը խոչընդոտում է պայմանագրի կատարմանը, ինչպես նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նշված պարտավորությունները չեն կարող կատարվել սահմանված ժամկետում:

2.3.3 1.1 կետում նշված աշխատանքների կատարման համար վարձատրությունը չստանալու դեպքում հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները:

2.4 *Գապալառուն պարտավոր է*

2.4.1 մինչև սույն պայմանագիրը կնքելը Պատվիրատուին անհրաժեշտ հավաստի տեղեկություն տրամադրել կատարվելիք աշխատանքների առանձնահատկությունների, զնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև Պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերվող այլ տեղեկություններ:

2.4.2 աշխատանքները կատարել պատշաճ կարգով, իսկ տեղ գտած թերությունները, որոնք առաջացել են իր մեղքով, վերացնել սեղմ ժամկետներում:

2.4.3. աշխատանքների արդյունքները հանձնել Պատվիրատուին, որի ժամանակ նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքների արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.4 պատվիրատուի պահանջով, սեղմ ժամկետում, անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, որոնք չեն առաջացել սխալ շահագործման հետևանքով, այլ եթե աշխատանքի կատարման ընթացքում պայմանագրի պայմաններից թույլ են տրվել շեղումներ, որոնք վատթարացրել են աշխատանքի որակը:

2.4.5 աշխատանքները կատարել անձամբ:

2.4.6 եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էտպես ավելացել է աշխատանքի համար սահմանված գինը, այդ դեպքում ժամանակին զգուշացնել Պատվիրատուին և Վաճառողին: Վերջիններիս կողմից գնի ավելացման հետ համաձայն չլինելու դեպքում Գապալառուն կարող է Վճարողից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

2.5 *Վճարողն իրավունք ունի*

2.5.1 հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Գապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքները կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

2.6 *Վճարողը պարտավոր է*

2.6.1 ժամանակին վճարել սույն պայմանագրի համար:

3. *Աշխատանքի գինը և վարձատրությունը*

14/11

3.1 Սույն պայմանագրի արժեքը կազմում է 4.676.000 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, առանց 20% ԱԱՀ-ի:

3.2 Սույն պայմանագրով կատարվող գործարքի ԱԱՀ-ից ազատված լինելու հանգամանքը պետք է հիմնավորվի Վճարողի կողմից համապատասխան գրավոր որոշում ներկայացնելու փաստով: ԱԱՀ-ից ազատված լինելու որոշումը չներկայացնելու դեպքում սույն պայմանագրի 3.1 ենթակետում նշված գումարը ենթակա է վերանայման և համապատասխան չափով ԱԱՀ-ի գումարի ավելացման:

3.3 Աշխատանքների գինը միավոր մակերեսի համար կայուն է և ենթակա է փոփոխման միայն աշխատանքների ծավալների և տեսակի փոփոխման դեպքում:

3.4 Վճարու մները կատարվում են հետևյալ սկզբունքով.

3.4.1 պայմանագիրը կնքելուց հետո երեք բանկային օրվա ընթացքում Վճարողը Գապալառուի հաշվեհամարին է փոխանցում սույն պայմանագրի 3.1 ենթակետում նշված գումարից որպես կանխավճար 2.000.000 (երկու միլիոն) դրամ գումարը, իսկ մնացած մասը 2.676.000 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) դրամը՝ աշխատանքների ավարտից հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.5 Կողմերի միջև կարող է կատարվել վերջնահաշվարկ:

4. *Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ*

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմերին:

5. *Վեճերի լուծման կարգը*

Կողմերի միջև աշխատանքների հետ կապված վեճեր առաջանալու դեպքում փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու պայմաններում վեճերի լուծումը հանձնվում է դաշնության քննությանը:

6. *Պայմանագրի գործողության ժամկետը*

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելուց հետո և գործում է մինչև 2015թ. օգոստոսի 31-ը:

7. *Եզրափակիչ դրույթներ*


Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերացումները և ստորագրությունները

Պատվիրատու՝
Տավուշի մարզի Բերդավան գյուղի
գյուղապետարան
ՀՎՀՀ՝ 0742205
Հեռ.: 0266 4949

Գյուղապետ՝ Արարատ Գարրիբեյան

Կ.տ




ստորագրություն

Վճարող՝

«ԿԱՍՐՁԱԿ» ՍԲԶԿ
Ք. Երևան, Զ.Քանաքեռցու 129/5
ՀՎՀՀ՝ 01003187
«Էյչ-Էս-Բի-Մի» բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 217-003-064151-001

Տնօրեն՝ Բենյամեն Աղամալյան




ստորագրություն

Կապալառու՝

«Մ.Ս.Ս.» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց պող. 254
ՀՎՀՀ՝ 02214638
«Ամբերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005171830200

Տնօրեն՝ Մերուժան Միրիջանյան



ստորագրություն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Կամբակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկապարտեզի խմբանայանների իրմաներթուղան» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

<p>Հիմնավորում</p>	<p>Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը</p>
<p>Հիմնավորում – 28.11.14, N 07/80-2/21500-14</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն – 28.11.14, N 07/80-2/21500-14</p>
<p>1. Առաջարկությունը հիմնավորված է</p> <p>2. Կցված է պայմանագրի լրանջակված տարբերակը</p>	<p>1. Առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ պարբերությունում նշել նաև «Կամբակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության և «Մ.Ս.Ս.» ՍՊԸ-ի մինչև 16.05.2014թ. կնքված պայմանագրի անվանումը («Կապալի պայմանագիր»):</p> <p>2. Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված պայմանագրի 6-րդ կետի համաձայն պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է մինչև 30.08.2014թ</p>
<p>Կցված է պայմանագրի լրանջակված տարբերակը:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն – 28.11.14, N 06/3-3/21541-14</p> <p>հասարակական սոցիալ-բարեգործական կազմակերպության կողմից բարեգործական որակերու նպատակով ներկայացված ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 16.05.2014թ-ից մինչև 30.07.2015թ-ը: Լույս նախագծով նախատեսվում է նաև այդ ծրագրին հարակից գործարք ճանաչել «Մ.Ս.Ս.» ՍՊԸ հետ 16.05.2014թ. կնքված պայմանագրով գործարքը, որի կատարման վերջնաժամկետը սահմանված 2014թ. օգոստոսի 30-ը: Միաժամանակ ՀՀ կառավարության 13.01.2003թ. N66-Ն որոշմամբ հաստատված Հավելված 2-ով սահմանված կարգի 11-րդ կետի համաձայն, ծրագիրը բարեգործական որակերու, այդպիսի ծրագրերի հետ անմիջականորեն կապված հարակից գործարքների շրջանակը որոշելու վերաբերյալ հայտը պետք է ներկայացվի մինչև ծրագրի իրականացումը նախատեսված:</p> <p>Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ՝ ծրագիրը և հարակից գործարքը բարեգործական որակման նպատակով ծրագրի մեկնարկից հետո ներկայացնելու վերաբերյալ:</p>
<p>Կազմակերպությունը պարզաբանում ընթացքում</p>	<p>Կազմակերպությունը պարզաբանում կտա նիստի 14/11</p>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
նոյեմբերի 2014 թվականի N Մ - -Ա
քաղ. երևան

19/12

**«ՍԵՅՎ ՂԸ ՉԻՂՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՑԱ-
ՑՈՒՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-14 և նոյեմբերի -ի N 06/3-3/-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N 02/-14, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N ՖՔ/ԱնՄ-4/-14 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի նոյեմբերի -ի N 01/07-1/-14 եզրակացությունները, որոշում է

1. Բարեգործական որակելի «Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) 2014 թվականին նոյեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը իրականացվող՝ 1,382,720,760 դրամ ընդհանուր արժեքով արժույթային ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլ» հայաստանյան ներկայացուցչության հասցեով ստացված դուրանակիր համակարգիչը, համակարգչի տակդիրը և պայուսակը (1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 1,347.65 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 383.45 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԻՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլ» հայաստանյան ներկայացուցչությանը՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Հ Ա Ս Ս Ս Վ Ս Ո Ւ

Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլը հայաստանյան ներկայացուցչության տնօրեն՝ Ստեփանյան Ստեփանյան



«Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլ»-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Նպատակը Հայաստանում երեխաների և երիտասարդների սոցիալ-տնտեսական և կրթական շահերի պաշտպանությունը և բարեկեցության բարձրացումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Սեյվ Ղը Չիղրեն ԼՍՆ (հասցե՝ ԱՄՆ, 20036 ք. Վաշինգտոն, 2000 L. փ. NW, ք. 500, հեռ. 001 (202) 640-6775, կայք www.savethechildren.org) Սեյվ Ղը Չիղրեն Լինթերնեշլը (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Լասսն Վան Նյու Ուստ-Բուլի 14-16 - 2593 BT, հեռ. 0031 (0)70 338 44 48, կայք www.savethechildren.nl)
4	Ծրագրի կատարողը	Սեյվ Ղը Չիղրեն Ինթերնեշլը հայաստանյան ներկայացուցչություն Ք. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ 02521537
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ մարզեր և Երևան Բնագավառը՝ սոցիալ-տնտեսական և կրթական

6	1,382,720,760 ՀՀ դրամ
7	Բարեգործության ստացողը
8	Ծրագրի իրականացման տևողությունը
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Բարեգործության ստացողներն են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 400 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, 1 833 փախստականներ Միլիտայից, մոտ 200 000 վերադարձված ցեղասպանության զոհերի ընտանիքները, 1 833 փախստականներ Միլիտայից, մոտ 200 000 վերադարձված ցեղասպանության զոհերի ընտանիքները, 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սեղվալի շինարարական ընկերությունը հայաստանյան ներկայացուցչությունը 2014թ. նոյեմբեր-2016թ. դեկտեմբեր ամիսների ընթացքում նախատեսում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՐԱՎ) կենսամակարդակի բարելավում գրադվածության իրականացում միջոցով

Հաշմանդամություն ունեցող անձանց գրադվածության իրականացում միջոցով կենսամակարդակի բարելավման նպատակով նախատեսվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական գրադվածության գործակալության համար ձեռք բերել և ներմուծել «ՏՈՐՆ ՏԳԱՆՏԵՏ» մակնիշի ավտոմեքենա և մտավոր ու ֆիզիկական կարողությունները չսպորտ 6 հատ սարքավորում (MAST), ինչը հնարավորություն կտա մատուցել գրադվածության ապահովման ծառայություններ հեռավոր վայրերում բնակվող և տեղաբաժնի/տրանսպորտային խնայելիքներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց: Նախատեսվում է նաև իրականացնել բոլոր 51 գրադվածության կենտրոններ, 46 նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական/ՄԿՈՒ հաստատությունների, 18 հասուն կ զիջերթի դպրոցների, ինչպես նաև միջոցային կարգով ընտրված ավելի քան 150 բիզնես կարողությունների աշխատակիցների հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքի կարողությունների զարգացում դասընթացների և գործնական աշխատանքների միջոցով: Դրա հետ մեկտեղ ավելի քան 400 հաշմանդամություն ունեցող անձինք կուրորդվեն գրադվածության կենտրոններ գրադվելու, և կատարվեն մասնագիտական կարողությունները գնահատելու, ինչպես նաև «կյանքի հնտությունների և աշխատանքի պատրաստվածության» դասընթացներին մասնակցելու հնարավորություն:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 1,012,748,176 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. նոյեմբերից մինչև 2016 թ. օգոստոս ամիսները:

2. Հասուն կարիքներ ունեցող երեխաների համար աղետների ռիսկի նվազեցում (ԱՐՆ)

Հասուն կարիքներ ունեցող երեխաների պատրաստվածությունը աղետների ռիսկերի հանդեպ բարձրացնելու նպատակով նախատեսվում է Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի, ինչպես նաև Երևանի 62 հաստատություններում (ներառյալ 21 հասուն հանրակրթական դպրոց և խնամքի

հաստատություն, 21 մանկապարտեզ և 20 ներքառական դպրոց, որոնք ընտրվել են երկնային հասուն կարիքներով երեխաների թվից) բարելավել հաստատությունների տարիանուն երկերը, տրամաբնել լուսա-ձայնային համակարգ, տարիանուն նշաններ, հավանորիհային և առաջին օգնության պարագաներ, ինչպես նաև վերապարաստել ուսուցիչներին և խնամատարներին, կազմակերպել հասուն կարիքներ ունեցող երեխաների աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ կրթությունը և իրականացնել տարիանուն ու ապահով ապաստան գտնելու վարժապետներ:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 42,634,920 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. նոյեմբերից մինչև 2015 թ. հուլիս ամիսները:

3. Փախստականների ներքին գաղթացման և բարեկեցության իրականացում

Երևանում և հարակից շրջաններում բնակվող սիրիական փախստական կանանց և երիտասարդների աշխատանքային հնարավորությունները բարձրացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել կարճաժամկետ մասնագիտական ուսուցում հաշվի առնելով շահառուների նախահարկություններն ու Աշխատանքի պետական գործակալության կողմից իրականացվող շուկայի ուսումնասիրությունները: Ուսուցմանը կնամակցեն թվով 150 Միլիտայից փախստական կանայք և երիտասարդներ, որոնք կընտրվեն կարիքների գնահատման հիման վրա: Ուսուցումը կկազմակերպվի Երևանի 5 պետական մասնագիտական ուսուցում իրականացնող հաստատություններում: Մասնագիտական կրթություն ստացած շահառուներից 50-ը աշխատանքի կտեղավորվեն Երևանի 10 գրադվածության կենտրոնների աջակցությամբ: Միևնույն ժամանակ առնվազն 40 փախստական կանանց և/կամ երիտասարդների հնարավորություն կտրվի անցնել մեկ կամ երկուսն ուսուցում և պրակտիկա հետագայում աշխատանքի անցնելու հնարավորությամբ: Այս նպատակով կանցվածքներ կան ղարմաբաններ, որոնք կհնտություններ և գրադվածության պատրաստակալություն թեմայով, որոնց կնամակցեն առնվազն 90 փախստականներ:

Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար կհաստատվի մրցույթ և առաջարկները կդիտարկվեն ընտրող հանձնաժողովի կողմից, որից հետո փոքր դրամաշնորհներ կտրամադրվեն 30 շահառուների ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար՝ նախապատվությունը տալով միայնակ կանանց և երտասարդների: Մրցութին մասնակցելու նպատակով թվով 45 շահառու կանցնի բիզնես պլանի կազմման, ինչպես նաև հարկային և իրավական հարցերով ուսուցում:

Շահառուների կարիքների և ռիսկերի գնահատման համար կտեղավորվեն դեպքի վարման քիսեր, ովքեր կիրականացնեն Միլիտայից Հայաստան ժամանած 220 ընտանիքների / ընդհանուր թվով 770 անձանց/ կարիքների գնահատում և կարիքի դեպքում կտրամադրվեն նաև հոգեբանական աջակցություն:

Գնվածքային ակտիվ կանանց 3 խումբ, որոնց կողմից առաջարկված համայնքային գործողությունների

14/12

համար ծրագրի շրջանակներում կտրամադրվի աջակցություն: Ընդհանուր առմամբ աջակցություն կատարան փախստականների և այլ անապահով խմբերի կարիքների լուծմանը միտված 6 նախաձեռնություն, որից ուշուրակիրուն կօգտվեն անվազն 448 փախստականներ:

Փախստական կանանց ինտեգրմանը նպաստելու նպատակով Երևանում կիրառվեն երկու ակումբ, որոնց նպատակը կլինի կազմակերպել սոցիալական և մշակութային ինտեգրմանը նպաստող միջոցառումներ, ինչպիսիք են թեմատիկ ֆիլմերի դիտումը և թեմատիկ գրույցները: Նախատեսվում է անվազն 180 փախստական կանանց ընդգրկել վերոնշյալ միջոցառումներին որոնք կնպաստաբերվեն փախստական համայնքների հետ աշխատանքի ընթացքում:

Միրիանայ երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելությունը բարձրացնելու նպատակով կստեղծվի 3 նախադպրոցական ուսուցման կենտրոն Երևանի 2 զարգցվելու 1 և 1 մանկապարտեզում, որոնք կառաջադրվեն Երևանի բարաբալտաբարանի կողմից: Այդ նպատակով կվերանորոգվեն և կկահավորվեն հասկացված սենյակները, ինչպես նաև կանցկացվեն վերապատրաստման դառնթացքներ աշխատակիցների համար: Կտրամադրվեն նաև անիրաժեշտ կրթական կուրսեր: Արդյունքում անվազն 30 սիրիանայ երեխաներ, որոնք ներկայումս չեն հաճախում նախադպրոցական կենտրոններ ասիանաֆիակ տեղերի պատճառով, հնարավորություն կստանան ստանալ նախադպրոցական կրթություն:

Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 99,926,528 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. նոյեմբերից մինչև 2016 թ. սեպտեմբեր ամիսները:

4. Ենթակի երեխաների սոցիալական ներառում՝ երեխայի այլընտրանքային խնամքի, ընտանեկան աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնման միջոցով

Երեխայի այլընտրանքային խնամքի, ընտանեկան աջակցության և ներառական կրթության ծառայությունների բարելավման նպատակով նախատեսվում է մշակել համապարփակ խնամատարության մոդել՝ հիմնվելով համաշխարհային լավագույն ստանդարտների վրա, ինչպես նաև հաշվի առնելով հայաստանյան ատանձնահատկությունները: Մոդելը կներկայացվի Կառավարության հաստատմամբ:

Երևանում և Լոռու, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում կիրառվեն 6 խնամատար ընտանիքների աջակցման կենտրոններ, որոնք ծառայության կնտուցեն խնամատար ընտանիքներին և խնամքի տակ գտնվող երեխաներին: Կոշակվեն նյութեր խնամատարության տարատեսակ ձևերի վերաբերյալ, որոնց օգնությամբ կվերապատրաստվեն 6 աջակցման կենտրոնների 12

14/12

մասնագետ: Դիմումների և մշակվելիք չափանիշների հիման վրա ընտրված ընտանիքների (թվով 180 խնամատար ընտանիք) անդամները նույնպես կանցնեն վերապատրաստումների շարք՝ մինչ խնամատար ընտանիք դառնալը:

Ծրագրի արդյունքում Երևանի և Լոռու, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արագածոտնի խնամքի 17 հաստատություններում գտնվող 80 երեխաներ, որոնք հնարավորություն չունեն վերամիավորվելու իրենց կենսաբանական ընտանիքների հետ, կտեղափոխվեն խնամատար ընտանիքներում:

Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 19,833,686 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2014 թ. նոյեմբերից մինչև 2016 թ. ապրիլ ամիսները:

5. Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության

